ՏԵՂԵԿԱՆՔ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից հատուկ սուբսիդիաների տրամադրման հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից քննություն անցկացնելու կարգի մասին» Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության մասին

Համաձայնագիրը հնարավորություն կընձեռի կիրառել արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաների համաձայնեցման մեխանիզմը, ինչի շնորհիվ կապահովվեն Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև բարեխիղճ մրցակցության սկզբունքները:

Արդյունաբերական ապրանքների նկատմամբ հատուկ սուբսիդիաները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ կամավոր համաձայնեցնելու նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողով դիմող Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունը ապահովագրված կլինի նշված սուբսիդիաների տրամադրման դեպքում ստացողի նկատմամբ միության անդամ ցանկացած երկրի կողմից հետագա փոխհատուցման միջոցների կիրառման ռիսկերից:

Դրա հետ մեկտեղ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը հանդիսանալով երրորդ՝ ոչ շահագրգիռ կողմ, քննություն սկսելու մեխանիզմի իրավունք ունենալու դեպքում կապահովի անկախ և օբյեկտիվ վերլուծություն՝ անդամ պետությունների կողմից տրամադրվող արդյունաբերական սուբսիդիաները Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրի դրույթներին համապատասխանության տեսանկյունից:

Անհրաժեշտության դեպքում, պետական աջակցության տրամադրումը, որը նյութական վնաս է պատճառում կամ կարող է վնասել ազգային տնտեսության ճյուղին, կարող է կասեցվել, իսկ Եվրասիական տնտեսության մասին Պայմանագրով նախատեսված դեպքերում՝ կարող է նաև արգելափակվել:

Համաձայնագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին և նպատակներին:

Ելնելով վերոհիշյալից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը նպատակահարմար է գտնում վավերացնել վերոնշյալ Համաձայնագրի: